

ԲԱՌԱՔՆՆԱԿԱՆ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՁՄԻ ԲԱՐԲԱՌԻ  
ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ՄԱՍԻՆ

ՆԻԿՈՒԱՅ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Որևէ բարբառ ուսումնասիրելիս բոլոր համակարգերում /հնչյունական, ձևաբանական, բառապաշարային/ ընդգրկված բառերը պետք է լինեն ստույգ՝ իմաստների ճիշտ մեկնաբանութուններով և համապատասխանեն բարբառի իրական վիճակին: Անկատար, հարևանցի քննութիւնը չի կարող հավաստի տեղեկութուններ տալ բարբառային տարատեսակ երևութիւնների մասին:

Տեսնենք, թե ինչպէս է ներկայացված Ողմի բարբառի բառապաշարը Հ. Աճառյանի «Հայերեն արմատական բառարանում»: Նախապես նշենք, որ բառացանկը թերի է՝, այստեղ կիսովի միայն այն բառերի մասին, որոնք բերված են մինչև «Նաւակատիք» բառը<sup>1</sup>:

Նկատելի են հետևյալ թերութիւնները:

1. Բառեր, որոնք հնչյունակազմով բարբառին հատուկ չեն: Քննենք առանձին-առանձին:

Ձայնավորներ: Ձ բաղաձայնից հետո ա-ի քմայնացումը, որ օրինաչափ է բարբառի համար, անտեսված է, ինչպէս ազատ > ազատ, գազան > գազան, խիղար > խէ՛զար<sup>3</sup> /հմմտ. զարկանել > զարկը՛լ, զարմանք > զարմանք՛/: Այս օրենքն այնքան հաստատուն է, որ եթե զ- ով վերջացող բառին հաջորդում է ա օժանգակ բայը, նույնպէս վերածվում է ա-ի, ինչպէս մազ ա, պառղ ա և այլն:

Հայցական հոլովում, երբ ա-ով սկսվող բառերը ստանում են գրարարի զ նախգիրը, այգ ա-ն քմայնանում է /օրինակ՝ Ըս ըզաղ ծէցը պօտօկ ի-նի «ես աղը լցրեցի կճուճի մեջ»: Կալնրցէ՛ ըզակ «Փակեցի ակը»/:

Կան ա-ի քմայնացման այլ գեպքեր, որոնցից բերում ենք հետևյալները: Ա-ն գառնում է ա բառասկզբին ավելացած հ-ից, ինչպէս նաև վ, ժ բաղաձայններից և քմային գ՛, ք՛- ից հետո, օրինակ՝ աղբիւր > հախպօ՞ր, վազել > վազիլ, ժանգ > ժանգ՛, մանգաղ > մանգ՛աղ, քար > ք՛ար և այլն:

<sup>1</sup> Աճառյանը գրում է, որ բարբառի բառացանկը կազմել է ոգմեցի մի գաղթականի միջոցով, որը դեռ չավարտած ոգմեցին անհետացել է: Անհրաժեշտ է նշել, որ միայն մեկ անձի տվյալներով բառացանկ կազմելը խրախուսելի չէ, այդ գեպքում վրիպումներն ու սխալներն անխուսափելի են:

<sup>2</sup> Մինչև նշված «սահման»-ն էլ մի շարք բառեր բառացանկից դուրս են մնացել, ինչպէս անութ, անթ > հօւնթ, արբանեակ > հօււրպընիկ, աւելորդ > հավընուութ, աքիս > աքյէիս, բերդ > պիութ, բող (բույս) > պըլուղ, դեհ > թախ, երիկամն > էրկամ, կարենալ > կըէրիլ, մարդակ > մաուտրակ, մեղաւոր > մըէղաուր և այլն:

<sup>3</sup> Հ. Աճառյան. Հայերեն արմատական բառարան. Հ. Ա, Երևան, 1971, էջ 83, 498, Հ. Բ, Երևան, 1973, էջ 364: Հաջորդ բոլոր օրինակները բերված են Ա, Բ, Գ (Երևան, 1977) հատորներից (այսուհետև՝ ՀԱԲ): Օրինակները բերվում են փակագծերում, իսկ ճիշտ ձևերը նշվում են փակագծերից դուրս:

ՀԱԲ-ում է է ավելացված այնպիսի բառերում, որոնք առանց այդ հ-ի են՝ ապրանք />հարանք/, առողջ />հառուխչ/, ամառն />համառ/: Հավելյալ հ-ի անտեղի դործածությունը հաստատվում է նաև նրանով, որ հ-ով է բերված արթուն />հարթուն/ բառը, որը Ողմի բարբառում բացակայում է: Սրա փոխարեն ասվում է ակախ /Ըս ակախա «ես զարթնեցի»/: Վրին թաղէն իրի, չակախավ «Վերին թաղից եկավ, չզարթնեց»/: Ինչպես նաև Անապատ արմատի գավառական բաժնում բերված «Հանապատ» բառը, որի վերաբերյալ փակագծերում ծանուցվում է իբր թե վանքի անուն է, սակայն Ողմում ո՛չ այդպիսի վանք կա, ո՛չ էլ սրբավայր: Ողմում գտնվող վանքը անվանվում է Սըվտէփանուս /=*Ստեփանոս*<sup>4</sup>: Սրբատեղերն էլ հայտնի են Կարմըր ավտըրան, Սըրբը՞տում, Շըմշըմունիկ անուններով:

Հավելագիր հ ունեցող բառերում հաջորդող ա - ն հակառակ այս օրենքին բերված է առանց քմայնացման՝ ավել (>հավիլ) - հավիլ, անագան (>հանգ՛ան)- հանկ՛ան:

Աճառյանը ենթադրում է, որ Ողմի բարբառն ունի ոնգային ձայնավոր, որը տառադարձել է «ա» ձևով: «Քննություն Վանի բարբառի» աշխատությանը կցված Ողմի բառացանկում /Երևան, 1953/ բերում է նման «ա» ունեցող 17 բառ, օրինակ՝ «ալոջ» ալուչ, ածու> ա ծօ, ածելի>ա րծրլէ՛, ականջ> ա գանջ, աման> ա ման» և այլն: Անվանի գիտնականն իրավացի է, սրբ այդ դիտողությունը վերաբերում է, օրինակ, Պոլսի բարբառին, ուր նույն հնչյունը բերված է [~] նշանով /հմմտ. ծանր> ձա րը, մանր> մա րը, էջ 63/: Ողմի բարբառում այսպես կոչված ոնգային «ա» չկա, բերված բառերում ա-ն հնչվում է մաքուր ա կամ վերածվում է ա-ի /օր. ալոջ>ալուչ/: Կան բառեր էլ, որոնց մեջ ա-ն մնում է անփոփոխ, իսկ ՀԱԲ-ում ունեն քմայնացած տարբերակ /օր. արմանալ/>զարմանալ՝ երկրորդ վանկում /-զարմանալ՛, աչք />աչք/-աչկ /հզն. աչկիր/:

Բարբառում ա>յէ հնչյունափոխությունը հաշվի չի առնվել՝ արտօսը />արտըսոնք՝ /- յէռտըսոնք՛ // յէռսոնք՛<sup>5</sup> /հմմտ. ալիւր.>յէլօ՞ր, արիւն>յէրօն/:

Հնչյունափոխված ասել անկանոն բայը բարբառում գործածական է սիլ ձևով /ա -ի սղումով/, ՀԱԲ-ում «ըսիլ»: Նույն բայը դերբայական և եղանակային որոշ ձևերում կիրառվում է և՛ սղումով, և՛ ա>ը փոփոխություն /դերբայներ՝ ապ. սիլու, վազ. ըսցիր, հար. ըսցօ՞կ, ենթ. ըսցօղ, ըղձ. ապ. սիմ, սիս, սա, հրմ. սա՛, սըցը՝ «ասացե՛ք»/:

Երթալ բայի և ձայնավորը բարբառում դառնում է ա, ը առթալ // ըռթալ, ՀԱԲ-ում «յէրթալ» է:

Մարախ-ը բերված է «մուրեխ» ձևով, սակայն բարբառում բառի հնչյունական կազմում որևէ փոփոխություն չի կատարվել, ինչպես Ասլանբեգի բարբառում է<sup>6</sup>:

4 Նույն անունը («Ս. Ստեփանոս») հիշատակում է Ղ. Պ. Նահապետյանցն իր «Տաճկական Հայաստան Բարվարայ տուն» հոդվածում /տե՛ս «Արձագանք», 1882, №13/:

5 Այդ հնչյունափոխությունը տեղի է ունեցել նաև արեզակն > յէրկյակ բառում, որի դիմաց բերված «արէգ՛ակ// յէրգ՛ակ» գուգաձևերից համապատասխան է վերջինը, որում , սակայն, սխալ է ներկայացված գ-ի փոփոխությունը:

6 ՀԱԲ, հ. Գ, էջ 274:

Ա-ն մնացել է անփոփոխ ծագել > ծաղկը՝ բառի մեջ, որը ՀԱԲ-ում «ծէքիլ» է:

Աք «ոտք» արմատի տակ բերված «ք'ացէ» և «ացկէ» ձևերից առաջինն ընդունելի է, գործածական է երկրորդը՝ միայն այն տարբերությամբ, որ է -ն պիտի ներկայացվեր է՝ երկբարբառով: Իսկ «ք'ացէ»-ն արտասանական նուրբ տարբերությամբ է գանազանվում երթալ>առթալ // ըռթալ անկանոն բայի հրմ. եղանակի հգն. ք'ացը՝ ձևից / եգ. կ'ընա՝/ կ'ընը՝/:

Հետևյալ բառերում ե ձայնավորը արտասանվում է ոչ թե ե / =իէ/, այլ երկբարբառակերպ ը՛, ինչպես՝ կեղծաւոր />կեղծավոր/- կը՛ղծա՛ւր, հեծանել />խեծնիլ/- խը՛ծնիլ:

Ե-ն սխալ է տառադարձված հերին />խէ՛րօն/, հետ />խէ՛տ/ բառերի մեջ: Առաջինում ե-ի դիմաց ունենք դարձյալ ը՛՝ երկբարբառակերպ կամ է՛ խը՛րօն // խէ՛րօն /ինչպես վերը բերված օրինակներում է/, իսկ մյուսում «է՛»-ի դիմաց ի, ա՛ խիտ, խատ, խա՛տ-ի անկումով՝:

Հերիք />խէրէք՛/ բառի մեջ տեղի է ունեցել ոչ թե ե > է, այլ ե > ա հնչյունափոխությունը՝ խարէք՛, ք՛ -ի կրճատմամբ՝ խարէ /օր. Խարէ խօսիս/:

Է ձայնավորի դիմաց ՀԱԲ-ը դնում է է, է՛, չնայած բարբառում այն կրել է ը՛, ը՛, յէ փոփոխությունները՝ անէծք />անէծք/- անը՛ցկ, երէկ />հէրէկ/ - հէրէկ, եղէգն />յէղէք՛/- յէղէք՛, ձէթ />ձ՛եթ/- ծը՛թ, կիւրակէ />կ՛րակէ/- կ՛րակէ. երէց />յէրէց/-յէրյէց:

Մէջ և մէջք բառերը ՀԱԲ-ում տառադարձված են «մեջ, մեջկ», որոնք հնչյունական փոփոխությունների ենթարկվելով՝ դարձել են մը՛ չ /նաև՝ մըչ, մաչ/, մը՛չկ:

Թէ շաղկապը ՀԱԲ-ում նույն ձևով է />թէ/, որի դիմաց բարբառն ունի թա՛ /օր. Թա՛ շատ, թա՛ ք՛ըչէ՛կ, ասըված կ'ըտա՛ «Թե շատ, թե քիչ, աստված դիտի»:

Հնչյունափոխության մասնավոր դեպքերը ևս չպիտի անտեսվեն, որոնցով ամբողջական տվյալներ կարող ենք ունենալ բարբառի հնչյունական կազմի մասին:

Գաղտնավանկի ը ձայնավորը բարբառում դառնում է ա, իսկ ՀԱԲ-ում ը-ն թողնված է անփոփոխ՝ յղի (> ըգէ՛), ե որի «է՛»-ի փոխարեն ճշտորեն ը՛ է՝ հաղը՛: Ինչպես և՛ ոչ թե տեղի է ունեցել հ-ի անկում, այլ յ-ն վերածվել է հ-ի (հմմտ. յաջողիլ > հաճօղիլ, Յարութիւն > Հարութիւն):

Նույն դիրքում ը ձայնավորը դառնում է ա խլել > խալիլ՝ բառում, որը ՀԱԲ-ում բերված է առանց նշված փոփոխության / > խլիլ/: Այդ բայը նույն ձևով առկա է նաև բարբառի եռանդամ ղուղաբայական հարադրություն մեջ՝ խալիլ-առնիլ -տանիլ:

Հնչյունափոխությանն առնչվում են նաև այնպիսի դեպքեր, երբ նույնատիպ փոփոխությունները կատարվելով իմաստով տարբեր բառերի մեջ՝ նույնացվում են: Բարբառն այդպիսի բառերը միմյանցից գանազանելու համար ունի իր սեփական միջոցները: Թեև խլել > խալիլ՝ բառը տվյալ

7 ՀԱԲ-ում վերջին երկու ձևերի ա-ն առանց քմայնացման է:

փոփոխություններ նույնանում է հալ արմատի տակ բերված հալել />խալիլ/ բայաձևի հետ /մի երևույթ, որ խորթ չէ բարբառին, այդպիսի օրինակներ էլի կան/, իմաստների տարբերակումը կատարվում է քմայնացած ա-ի միջոցով:

Երկին բառը ՀԱԲ -ի դավառական բաժնում Ոգմի բարբառի համար նշված է «յէրկէնք», իսկ երկան «ջաղացք, ջաղացի քար»-ը «յէրկանք» ձևերով: Երկու բառերն էլ բարբառում ունեն միևնույն յէրկընք՝ ձևը: Տարբերելու համար մեկն անվանվում է ծընաս յէրկընք՝ «ձեռքի երկանք», մյուսը ասըծու յէրկընք՝ «աստծու երկինք»:

ՀԱԲ-ի դէպ արմատի տակ բերված «դէպնիլ /<դիպիլ/» բայը Ոգմի բարբառում չի դործածվում: Սրա փոխարեն առկա է առնիլ /<առնուլ/ «դիպչել»-ը: Հաստատվում է հետևյալ օրինակով.

Ձարկըցէնք լաք՝ ուն<sup>8</sup>, առըց ծաք՝ուն:

Ի ձայնավորի դիմաց նշված բառերում բարբառն ունի ը՛, ի, իսկ ՀԱԲ-ում «է՛» է՛ կորդին «թամբ, համետ» />կուրդէ՛ն/- կուռտընք՝, երկիր />յէրկէնք/- յէրկընք, մոծիր />մուծէլ «կայծ»/ - մոծիլ, հդն. մոծըլք՛իր /վերջինում՝ ի>ը/:

Ձի բառը ՀԱԲ-ում բերված է «ձ՛է» ձևով: Երբ բարբառում անձնական ես />իս, ըս/ դերանվան հոլովաձևերից մեկը ձէ է /մյուսները՝ ձը, ձի/, ինչու՞ ողմեցին «ձ՛է» պիտի ասեր ձիուն՝ հրաժարվելով մայրենի բարբառի հարազատ ծէ՛ ձևից:

Ինքն > էնք՝ դերանվան հայցական հոլովաձևերն են ըզուր, ըզէնք՝, ըզինք՝, դինք՝, սակայն ՀԱԲ-ում բերված է «զէնք» ձևը:

Ի ձայնավորը բաժին />ք՝աժին/ բառի մեջ թողնված է անփոփոխ, մինչդեռ բարբառում վերածվել է է՛ երկբարբառի /պը՞ժէն/, որը «Ալէ-լույա» երգի մեջ պահպանված է նույն ձևով.

Մամը՛, մամը՛, կարմըր սօլիր խակ՛ի,  
Կընը՛ մառան, ըզըմ պը՞ժէն պի՛:

Դիմանալ բայը ՀԱԲ-ում «դէմանալ» ձևով է, ուղիղ է տիմանալ՝-ը:

Բժիշկ բառի դավառական բաժնում Ոգմի բարբառի համար նշված է անսովոր «բ՛ժկիլ» ձևը / Վ. Ա, էջ 445<sup>9</sup>: Նախ բարբառն իմացող յուրաքանչյուր ողմեցի «բ »-ն կհնչի Այ, երկրորդ բառը քմահաճորեն չի աղճատի, այլ կարտասանի պըժըշկիլ:

Ո ձայնավորը մոլորել />մօլըրել/ բառի մեջ հնչվում է ոչ թե օ, ինչպես ՀԱԲ-ում է, այլ ո՛ւ մոլորվել// մոլորվել՛:

Կով />կով/ բառի ճիշտ ձևն է կօվ:

Խստոր />սղտօր/- սըղտօր բառի մեջ առկա է ոչ թե ո > օւ /-օ՞ւ/, այլ ո>ու փոփոխությունը:

Առու />հառու /, երդումն />հերտում/ բառերի ու-ի դիմաց բարբառն ունի օ՞ // օ՞ երկբարբառ՝ հառօ՞, հէռտօ՞մ:

8 Ունի «մայր թռչուն» իմաստը:

9 «Քննություն Վանի բարբառի» աշխատությանը կցված բառացանկում այս բառը բացակայում է:

Բարբառը միմյանցից զանազանում է թուղթ>թօ՞խթ և թօխթ «դրամանոց կշռաքար» /պրսկ. tuxt/ բառերը: ՀԱԲ-ում այդ տարբերությունն անտեսվել է:

Միսլ տառադարձությունը կարող է շփոթության տեղիք տալ: Մինչ «մինչև, ց» արմատի տակ բերված «չուր» ձևը պիտի տառադարձվեր չուր, որպեսզի կապվեր նույն իմաստի հետ, առանց քմային ու-ի կհասկացվի չոր > չուր<sup>10</sup>:

Ուրթէ՛կ ճօ՞ւր կէնա,  
Բօլըճէ՛կ ճօ՞ւր կրկըրա,  
Չուր բօլըճէ՛կ կըկ'ա,  
Ուրութկան առտ կրչուրնա-թըռնա:

Խախուա />խախուտ/ բառը բերված է ու>ու /օօ՞/ հնչյունափոխությունում, մինչդեռ այն բարբառում դարձել է օ, հավելվել է նաև ր ձայնորդը՝ խարխօտ:

Ճիշտ չեն բերված հետևյալ բայերի վերջավորությունները / իլ-ի փոխարեն ալ/ թուանիլ />թըռնալ/-թըռնիլ, յիշել/>հիշալ/-հիշիլ//մէ՛տ կ'ալ: Իսկ հոտոտել բայը, որն ունի ը՛լ վերջավորությունը, ՀԱԲ-ում ալ է />խուտտալ/- խուտտորիլ:

Նշված դիտողություններից բացի պետք է նկատել նաև, որ հնչյունական փոփոխությունները ցույց տվող օրինակներում կան միմյանց հակասող ձևեր: Խաբ արմատի տակ Ողմի բարբառի համար նշվում է «խաբ'իլ» բայը, իսկ խաբբա ածականի դիմաց՝ «խապըբ'ան»: Հակասությունն այն է, որ եթե առաջինի մեջ «բ'» է, նույն արմատով կազմված երկրորդ ձևում ինչու՞ պիտի «ալ» լինի/ որ ճիշտ է ստացվել/: Իսկ խաբ />խապ/-ին կպցրած «բ'ան-ը շինծու է: Բարբառում ունենք> խապիլ, խապըբ'ալ»:

Հիշենք նաև, որ «>բ'ան» բառը արտասանվում է պը՞ն:

Գալ />գ'ալ/ օրինակում «գ'»-ին հաջորդող ա-ն առանց փոփոխություն է, նույն բաղաձայնից հետո առկա է քմային անգալար />գ'ալար/ բառում:

Ճիշտ են կ'ալ, կ'ալարան ձևերը, որոնցում օրինաչափ կերպով ունենք միայն ան/նաև գ'ալ>կ' հնչյունափոխությունում. համտ. գարի>կ'արիէ՛/:

Աղբիւր > հախալօ՞ւր բառը ՀԱԲ-ում ունի «հախիիւր» ձևը, ուր խուլ պ-ի փոխարեն արհեստական շնչեղ խուլ փ է: Իսկ ակն «աչք» արմատի տակ Ողմի բարբառի համար «ջրի ակունք» նշանակությունում բերված է «հաղբ'րակ» բառը:

Երկբարբառներ: Բարբառում ոյ-ը սովորաբար վերածվում է ու-ի կամ ու-ի , իսկ բացառություն կազմող բառերում օ-ի, դրանցից է ա-նոյչ>անօչը-ը: Նույն ձևով հանդիպում է «Յէրազ» նմուշում.

- Քէլղա՛մ, Անգրա՛ն, գօ հան ա մը կօք՛վը՛/«ընկուլզի»/ ծառիբ, ըռ-չիցը՛ /«նայեցե՛ք»/, խընձուրը՛ ծառիբ, տանձը՛ ծառիբ, ծիրնը՛ ծառիբ,

10 Օրինակը բերվում է մեր «Ողմի բարբառը» ուսումնասիրության բարբառային նմուշների «Սովորություններ ու հավատալիքներ» հատվածից: Բօլըճէ՛կ նշանակում է «միջատ», ուրթէ՛կ՝ «մաշկային հիվանդություն մկնատամ»:

ք'անէմ առնդ' ա /«գեղեցիկ է»/, ք'անէմ անօչ ա...: ՀԱԲ-ում օ-ի փոխարեն ու է:

Ոյ երկբարբառը մասնակի փոփոխությամբ վերածվում է օ" երկբարբառի միայն երեկոյ > հըրկօ"ն, պոոյտ > պլտօ"տ բառերում, իսկ յոյա > հուս բառում դառնում է քմային ու /հմմտ. լոյս > լուս, դոյն > կ'ուն/ : ՀԱԲ - ում օւ է՝ յոյս />օւս/¹:

Իւ երկբարբառը վերածվում է օ-ի, ՀԱԲ-ում ո է՝ ճիւղ />ճող/- ճօղ:

Առուոյտ բառում «ուոյ»-ի դիմաց ունենք ա" երկբարբառ ՀԱԲ-ի «ավու»-ի դիմաց />աուավուտ/-աուա"տ:

Բաղաձայններ: Բակլայ բառի խուլ կ-ն բարբառում փոփոխության չի ենթարկվել, իսկ ՀԱԲ-ում այն փոխարինված է հ -ով />բահլա/- բը"կլա:

Ողմեցու համար օտարոտի արտասանությամբ են ներկայացված աւետարան />ավդրան/, աստգ />ասդղ/, եղբայր />աղբեր/ բառերը, փոխավորան, աստըգ, ախար'ը:

Լի բառը բարբառում գործածական է լէկ /կրկնությամբ՝ լէկլէկ/ ձևով, իսկ ՀԱԲ-ում կ-ի դիմաց «գ» է />լէգն/: Հնչյունական օրենքներով կ > գ փոփոխությունը չի հիմնավորվում: Եթե կ-ն լիներ ն ձայնորդից հետո , օրինաչափ կերպով կարող էր դառնալ գ¹. հմմտ. ճանկ > ճան գ¹, կրուկն > կըրօնգ¹:

Ռ ձայնորդի փոխարեն ը է՝ հարցանել />խարցընիլ/ - խառցընիլ, գերեզման />գ'էրէղման/ - կ'էռգման, գորտ />գ'որտ/ - կ'ոռտ , գատարկ />գ'արտակ/ - տը"տակ, արջ />արջ/ - առճ , գործ />գ'ուրծ/ - կուռծ «աշխատանք», խուրձն />խօրց/ - խօ"ռծ:

Բուրուառ />բ'էօրվալ/ պէ"ուվը"ու բառում ո>լ փոփոխությունը բարբառի համար անբնական է:

Բ-ի դիմաց փ, փոխ. պ' բամբակ />փամբակ/ - սլը"մբակ// պը"մբբ"կ:

Գ-ի դիմաց կ, գ, փոխ. կ¹, գ¹ գունգ />կօնտ/ - կ¹օնգ¹, եգունգն />յէ-ղօնդ/-յէղօնգ¹:

Գ-ի դիմաց ք, փոխ. կ' ագգ />ասք/ - ասկ:

Գ-ի դիմաց գ¹, փոխ. կ¹ գագան />գ'աղան/ - կ¹ագան, գալար />գ'ալար/ - կ¹ալար:

Գ-ի դիմաց ք¹, փոխ. կ¹ թագաւոր />թաք'աուր/ - թակ'ա"ր:

Գ-ի դիմաց կ, փոխ. գ¹ գանգակ />գանկակ/ - գանգ'ակ:

Գ-ի դիմաց գ¹, փոխ. կ¹ անագան />հանգ'ան/ - հանկ'ան:

Դ-ի դիմաց թ, փոխ. տ' արգար />արթար/ - արտը"ր:

Կ-ի դիմաց գ, փոխ. կ' բարակ />բ'արագ/ - սլը"րակ, ակօս />ագուս/ - ակը'ց // ակօց:

Կ-ի դիմաց կ¹, փոխ. գ¹ ճանկ />ճանկ¹/ - ճանգ¹:

Կ-ի դիմաց ք, փոխ. կ¹ մէջք />մէջք¹/ - մը"չկ:

Կ-ի դիմաց կ, փոխ. գ¹ արմունկն />յէրմօնկ¹/ - յէրմօնգ¹:

Ճ-ի դիմաց ջ, փոխ. անփոփոխ ճ' մաճ />մանջ¹/ - մաճ:

Ն-ի դիմաց վ, փոխ. անփոփոխ ն' />անըվօվ¹/ - անընօվ:

Պ-ի դիմաց անփոփոխ պ , փոխ. բ' ամպ />ամսլ¹/ - ամբ:

11 Օու երկբարբառը Աճառյանը տառադարձել է օւ ձևով: Սրան նախորդող յ>հ-ն պահպանված չէ:

Ջ-ի դիմաց չ, փոխ. ճ՝ թրջել />թռչիլ/ - թրուծիլ:

Կան նաև այլ կարգի խախտումներ: Յիշատակ բառի մեջ յ > չ բաղաձայնը անկման չի ենթարկվել, սակայն ՀԱԲ-ում ունի «իշատակ» ձևը, փոխ. հըշատակ:

Մած />մանջ/ բառը բերված է հավելյալ ն-ով, մինչդեռ բարբառում այն հավելում չունի մած:

Մեկի փոխարեն կրկնակ բաղաձայններով են ներկայացված ամեն/այն/ />համմէն/, ձմեռն />ձը՛մմէն/, ջրյորդան />ճուռոթան/ բառերը:

Հ. Աճառյանը հայտնել է այն կարծիքը, որ Ողմի բարբառում կան շնչեղ ձայնեղ բաղաձայններ<sup>12</sup>: ՀԱԲ-ից բերենք մի քանի օրինակ՝ կից նշելով ճիշտ ձևերը:

Բառասկզբի դիրքում

Բ > բ՝ - պ. բարձ />բ՛արջ/ - պը՛ոց, բարակ />բ՛արաղ/ - պը՛րակ, բերել />բ՛իրիլ/ - պիրիլ, բոյն />բ՛ինն/-պըյուն:

Գ > գ՝ - կ՛. Գաղտուկ />գ՛աղտի/-կ՛աղտէ՛, գիտեմ />գ՛ըտիմ/- կ՛ըտը՛մ, գիւղ />գ՛իւղ/- կ՛ը՛ղ, դող />գ՛ուղ/- կ՛ը՛ղ:

Դ > դ՝ - ա , տ՛. դաաարկ />դ՛արտակ/ - տը՛ւտակ, դնել />դ՛նիլ/-տ՛ըրիլ, դու />դ՛ու/- տօ՛ւ, դուռն />դ՛ուռ/ - տօ՛ւռ:

Ձ > ձ՝ - ծ. ձագ />ձ՛աք/ - ծաք՛, ձայն />ձ՛են/ - ծը՛ն, ձեռն />ձ՛եռ/ - ծը՛ն, ձէթ />ձ՛եթ/<sup>13</sup> - ծը՛թ:

Բառամիջի և բառավերջի վերաբերյալ օրինակները քիչ են. դուում />գ՛ գ՛ում/ - տըտօ՛ւմ, իջանել />իջ՛նիլ/ - իճընիլ, կանկար />կանգ՛ար/-կանգ՛աւո, կորդին />կորգ՛ին/ - կօուտը՛նք՛, յաջօղիլ />հաջ՛օղիլ/ - հաճօղիլ, դաղ />գ՛ըգ՛էլ/ - կ՛ըտը՛լ, երբ />հիբ՛/ - հիփ, երինջ />յէրէնջ՛/ - յէրէ՛նջ, ժանգ />ժանգ՛/ - ժանգ և այլն:

ՀԱԲ-ում նույնիսկ հանդիպում են այնպիսի բառեր՝ իբր թե ունեն շնչեղ ձայնեղ հնչյուններ/, որոնք Ողմի բարբառում չեն դորձածվում, օրինակ՝ բազ > բ՛ազ, բազուկ «դաստակ» > բ՛ազուկ, բղուկ > բ՛ղող, բնակել > բ՛նակիլ, գարման > գ՛արման, ձմերուկ > ձ՛մէրօկ, գուլթ > գ՛ուլթ, գամոն > գ՛ամուն: Սրանց փոխարեն ունենք՝ վօուդէք՛, ծը՛ն, պօտօկ, ապըրիլ, հարթ, բաշլա, խէղճ, սսղուր:

Թեև Ողմի բարբառը չունի «ձ՛ար»/մազ/ բառը, ՀԱԲ - ում կա այդ բաղադրիչով կազմված «ձ՛արմաղ» բարդությունը: Ահա մաղերի տեսակներին տրվող անունները, որոնցից ոչ մեկը չի կապվում «ձ՛ար»-ի հետ, ինչպես կալմաղ /մեծ անցքեր ունեցող/, ցուրնը՛ մաղ /մանր անցքերով/ և յէլուրը՛ մաղ: «Ձ՛ար»-ի փոխարեն գործածվում է մաղ-ը, որ նշված է ՀԱԲ-ի 221 էջում /հ. Գ/:

Ակադեմիկոս Ա. Ղարիբյանը, հիմք ընդունելով Հ. Աճառյանի աշխատություններում տեղ գտած նյութերը, ինչպես նաև երկու նմուշներից

12 Տե՛ս Հ. Աճառյան. Հայ բարբառագիտութիւն. - Էմինեան ազգագրական ժողովածու, հ. Ը, Մոսկուա-Նոր Նախիջևան, 1911, էջ 148:

13 Բառացանկում ջ-ով սկսվող մեկ բառ կա ջրյորդան />ճուռոթան/- ճուռըթան, ձղխնի />ջըխան/-ձըխան: Երկու օրինակ էլ հանդիպում է դարձյալ «ոզմեցի նորեկ գաղթականէ մը» 1897 թ. Փարիզում Աճառյանի գրի առած նմուշում՝ «ջուրուն հաֆսար /սանձ/», «ջուղ ընկիր», փոխ. ճուրու հավսար, ճուճ ընգիր:

մեկը, դրում է. «Ոզմի բարբառի բաղաձայնական սիստեմը քառաստիճան է, միայն թե խուլերը բառամիջում քիչ դեպքերում են վերածվում ձայնեղներին, մինչդեռ բոլոր ձայնեղները վերածվում են շնչեղ ձայնեղներին»<sup>14</sup>:

Ինչպես հաստատում են օրինակները, գրարարի ձայնեղ պայթականները /բ, գ, դ, ձ, ջ/ Ոզմի բարբառում օրինաչափորեն դարձել են խուլ պայթականներ՝ պ, կ /կ/, տ /տ/, ծ, ճ: Միայն սակավաթիվ բառերի մեջ պահպանվել է այդ հնչյունների ձայնեղութային որակը /մ, ն ձայնորդներից հետո, որոշ տեղանուններում ու անձնանուններում, փոխառյալ ու բարբառային ձևերում/: Բերված օրինակներից պարզորոշ երևում է, որ Ոզմի բարբառում շնչեղացած ձայնեղներ չկան<sup>15</sup>:

Պետք է ճշտել հայ բարբառագիտությունում մեջ արմատավորված այն սխալ կարծիքը, ըստ որի՝ Ոզմի բարբառը դիտվում է որպես քառաստիճան բաղաձայնական համակարգ ունեցող բարբառ<sup>16</sup>:

Վերջապես, եթե մի բարբառում ձայնեղները օրինաչափորեն վերածվում են խուլերին, շնչեղ ձայնեղների առկայությունը բացառվում է<sup>17</sup>:

2. Բառեր, որոնց իմաստները սխալ են մեկնաբանված: Հ. Թումանյանի պատկերավոր արտահայտությունը՝ «Մութով պարզվում է մութը, և դրա համար մնում է մութը»<sup>18</sup>:

ՀԱԲ-ում նշվում է, որ Ոզմի բարբառում կզակ-ը «ստորին ծնոտը, դունչը» կիրառվում է «քմաց վարագույր, կատիկ» նշանակություններով: Մինչդեռ այդ իմաստն արտահայտելու համար գործածվում է աստղունք՝ ձեռ (օր. ճօ՞ր թըռավ ըղըմ աստղունք՝):

14 Տե՛ս Ա. Ղ ա ռ ի բ յ ա ն. Հայ բարբառագիտություն. Երևան, 1953, էջ 94:

15 Այս թյուր տեսակետը կրկնվում է տարբեր աշխատություններում: Տե՛ս Հ. Զ. Պ ե տ ռ ո ս յ ա ն, Ա. Ա. Գ ա լ ս տ յ ա ն, Թ. Ա. Ղ ա ռ ա գ յ ու լ յ ա ն. Լեզվաբանական բառարան. Երևան, 1975, էջ 246. «/Ոզմի բարբառի/ բաղաձայնական համակարգը քառաստիճան է /բ՝, բ, պ, փ/...»:

16 Ոզմի բարբառի վերաբերյալ լեզվական բոլոր փաստերն ու գիտողությունները նույնությամբ արտագրել է Ա. Հաննյանը մեր «Ոզմի բարբառը» թեկնածուական ատենախոսությունից և հանգես եկել մի հոգվածով, որը տպագրվել է ՀՍՀՄ հանրագիտարանում (հ. 8, Երևան, 1982, էջ 607-608), սակայն չի նշել սկզբնաղբյուրը: Շրջանցելով, որպես գրականություն, հիշատակել է այլ աշխատություններ, որոնց հեղինակներից և ոչ մեկը ակնարկ անգամ չի արել, թե Ոզմի բարբառում բացակայում են շնչեղ ձայնեղ հնչյունները: Չնայած բաղաձայնական համակարգի մասին մեր հիմնավորումը հակընդդեմ է Աճառյանի կարծիքին, հոգվածի հեղինակը հիմք ընդունելով հենց այդ փաստերն ու եզրակացությունները՝ հիշատակում է Աճառյանի անունը /տես նաև Ն. Ե. Հ ո վ ս փ յ ա ն. Ոզմի բարբառի մի քանի առանձնահատկությունների մասին. - «Պատմա-բանասիրական հանգես» /այսուհետև ՊԲՀ/, 1966, №2, էջ 226-238/: Գիտության մեջ նման վարմունքն անթույլատրելի է: Ընդհակառակն՝ մեծահամբավ լեզվաբան Գևորգ Զահուկյանն իր «Հայ բարբառագիտության ներածություն» արժեքավոր աշխատության մեջ /Երևան, 1972/ օգտագործել է մեր հայտնած տվյալներն ու հոգվածներում եղած լեզվական փաստերը և գիտնականի բարեխղճությամբ նշել է հեղինակի անունը (էջ 9, 335):

17 Ոչ ճիշտ բարբառային ձևերի վկայակոչումը կարող է զանազան թյուրիմացությունների տեղիք տալ: Եթե կարևոր որոշ հոգվածներում այս կամ այն եզրակացություն համար բերվել են Ոզմի բարբառին վերաբերող ոչ հավաստի բառաձևեր, հոգվածագիրների մեզքը չէ, սխալը գալիս է Հ. Աճառյանից /տես Ա. լ. Մ ա ռ գ ա ռ յ ա ն. Բարբառային բառերի մեկնություններ. - ՊԲՀ, 1971, №3, էջ 210, 219-220, Բ. Բ ա ղ ռ ա մ յ ա ն. «Ա» ձայնավորի փոփոխությունները բարբառներում. - ՊԲՀ, 1968, №4, էջ 80-81, 83-84, 86/:

18 Տե՛ս Հ. Թումանյանի գրախոսությունը Հ. Աճառյանի «Հայերեն գավառական բառարանի մասին» /Հ. Թ ու մ ա ն յ ա ն. Երկերի ժողովածու. հ. 4, Երևան, 1951, էջ 408/:

Միջին հայերենի կոպիտ />կուպետ «կոշտ, անհալթ. բիրտ» բառը Ողմի բարբառում չկա, այդ իմաստով գործածվում է բարբառային քլերէթ «կոպիտ, գոեհիկ, անտաշ» ձևը:

Աճառյանը գրում է. «Ավելի փոխաբ. սատանա նշանակութամբ ունեն Ախ. Երև. Կր. Շմ. Ողմ. Սլմ. Հակառակ»: Բարբառում նույն բառը կիրառվում է խակառ ձևով և «սատանա» իմաստի հետ կապ չունի. ինչպես ենթադրվում է: Այդ իմաստն արտահայտվում է խակառ կանգլընիլ «ընդդեմ լինել» հարադրութամբ: «Սատանա» իմաստն է վերագրվում նաև թշնամի բառին. «Ողմ.» թշնամ է «սատանայ» /ԱԲ, Հ. Բ, էջ 192/: Ողմի բարբառում թշնամի բառի փոխարեն գործածվում են դուշման // նայար զուգածեերը: Բերվում է Եզնիկ Կողբացու վկայությունը. «Սատանայ յբերայեցուց և յԱսորուց լեզու է խոտորեալ թարգմանի ... և ի թշնամութեն է ընդ մարդոյն ունելոյ իւրն կամօք եղև բանսարկու»: Եզնիկի ասածը հասկանալի է, բայց ինչու այն առանց որևէ հիմքի կապել Ողմի բարբառի հետ: Ողմեցին թշնամի բառը «սատանա» իմաստով չի գործածում: Սատանա-ն կիրառվում է հենց այդ նշանակութամբ, որ գտնում ենք «Շախկանս պարան» ավանդության մեջ. «Շախկանս մառթ կըխանա ըզասէղ կըզարկա սատանու վը՛րէն...»<sup>19</sup>: Թշնամի բառի փոխարեն գործածվող դուշման և նայար ձևերն էլ վկայում են «Աբաբալաք» հեքիաթի հետևյալ տողերը. «Դուշմընը տը՛ր ա, կըլ՛նա անու նայարք՛իր կըկ՛ան վը՛րէն կըռէ՛վ, մինք՛ էլ ըզանունց հօկ՛ընինք»:

Կուռ «ծեծած, գործած, բանած /մետաղի համար/» արմատի տակ նշված «կուան» բառը Հ. Աճառյանը բացատրում է. «Ջաղացքի մասերից մեկն է», այնինչ բարբառում կուան նշանակում է մուրճ:

Մի շարք բարբառներում դադարել բառը գործածվում է զանազան նշանակություններով: Ողմի բարբառում կիրառվում է ոչ թե «հոգնել» իմաստով, ինչպես նշված է ՀԱԲ-ում /տառադարձված դ՛ադ՛արիլ/, այլ նշանակում է «1. սպասել, 2. վերջանալ, 3. կանգ առնել, 4. մեկին հանգիստ թողնել»: Իսկ հոգնել իմաստն արտահայտելու համար գործածվում է քլերթընիլ-ը: Ահա օրինակ «նանքլըք՛ար» նմուշից. «Մը ճամխընիրու մը՛չ ըմը՛ն տըէղ խանք՛ըք՛ար կը՛ր : ... Մանդըր շըլ՛ակ ընչ կըշըլկը՛նք, շատ կըքլըթնը՛նք, ընչ կըխասնը՛նք խանք՛ըք՛արը տը՛ղ, կըխանգը՛նք»:

Թուրթ /< թորթ, թորթն/ բառը բացատրված է «մի տեսակ բույս, մարեմայ խոտ, եզնալեզու, զվիրակ կամ մի ուրիշ բույս»: Նախ՝ Ողմի բարբառն այգալիսի բուսանունն չունի, երկրորդ՝ «թորթ»-ը և «մարեմայ խոտ»-ը տարբեր բույսեր են<sup>20</sup>:

ՀԱԲ-ում ժախ «մի տեսակ բույս է, վայրի բողկ» արմատի տակ ողմի բարբառի համար նշվում է ժախ ձևը՝ «բոխի, տաճկ. չաշուր» բացատրութամբ: Իսկ ըող կամ բողիկ բացատրված է «մի տեսակ բույս է», որի գավառական ձևերն են «բ՛օխ / Երև. /, բուխ /տփ./, պէօխ /վն./, սլէխի /Ղրբ./» և այլն: Այնուհետև գրված է. «Այլուր ունինք նաև բողի Մշ. վն., բո-

19 Ավանդազրույցի հեղինակներն են ընդհանուր հասմիկ Շահինյանը և Թաթոս-Թաղդիս Պետրոսյանը:

20 Տե՛ս Բ. Ս. Ղ ա գ ա ը յ ա ն. Բուսանունների հայերեն-լատիներեն-ռուսերեն-անգլերեն-ֆրանսերեն-գերմաներեն բառարան. Երևան, 1981, էջ 66, 99:

դիվ եվդ. Մշ. Վն ... որոնք նշանակում են «մի տեսակ դաշտային մատնավոր»<sup>21</sup> դառնահամ բույս, որի թթուն շատ հարգի է Հայոց մեջ, թրք. չաշուր»:

Փախ-ը վայրի բողկ չէ, իսկ բողիկ-ին տրված բացատրությունը ճիշտ է: Ոգմի բարբառում գործածվում է ոչ թե «ժախ», այլ պլ'ուղ ձևը:

Փաստորեն Փախ-ը և բողիկ-ը միևնույն բույսի անուններն են<sup>22</sup>:

ՀԱԲ-ում /հ. Ա, էջ 241-242/ նշվում է, որ ապսպարել բայը Ոգմի բարբառում ունի «պլսպարիլ» ձևը, որն ստացել է «սպասել» իմաստը: Վերջինիս փոխարեն գործածվում է տր'տըրիլ /<դադարել/ բաղմիմաստ բառը, որն այլ նշանակություններից բացի, ինչպես ասվել է, ունի նաև սպասել իմաստ /օր. Տը'տըրի սիմ, «Սպասիր ասեմ»/: Պարզապես ապսպարել-ը շփոթված է պլսպարիլ «ակնդետ նայել» իմաստով գործածվող բայի հետ:

ՀԱԲ-ում /հ. Գ, էջ 280/ մարդակ «գերան» բառի գիմաց Ոգմի բարբառի մասում կ ձևը թողած կոճ արմատի տակ /հ. Բ, էջ 625-626/ նույն նշանակությամբ բերվում է «կոճ»-ը, որը գործածվում է կոճը իմաստով:

Խորհ «խորհուրդ, մտածողություն, միտք» արմատի գավառական բաժնում կարգում ենք. «Ոգմ. խորխութ «գաղանի խորհրդակցություն»:

Հորինված են թե՛ բառը, թե՛ բացատրությունը:

3. Բառեր, որոնք Ոգմի բարբառում չեն գործածվում<sup>23</sup>, սակայն բերված են ՀԱԲ - ում: Այդ կարգի բառերը կարելի է խմբավորել այսպես՝

ա) բարբառային համարժեքներ ունեցող բառեր: Կողմ />կուղմ/ բառի փոխարեն ասվում է թիվ /օր. Ան թիվէն իրի «Այն կողմից եկավ»/: Բարբառին հատուկ է հաղար-ը /հ. Գ. հաղարք'իր/, սակայն ՀԱԲ-ում այգի բառի տակ բերված է «հէ գէ» ձևով: Աղավաղված հնչմամբ ներկայացված առաա />րոաստ/ բառը գործածվում է շատ ձևով:

Կնճիւ ըստը խիստ ձևափոխության ենթարկվելով բարբառում դարձել է կըճըճմօ՞ճ, որը ՀԱԲ-ում նույն արմատի գավառական ձևերի մեջ «կըճըճըվիլ» է՝ «թելը կապը խառնվել» բացատրությամբ: Սակայն այդ իմաստի համար բարբառն ունի խառնակվիլ ձևը /օր. խառնակվավ հարօ՞ր «խառնվեց, խճճվեց իրար»/:

Խիթ արմատի տակ Ոգմի բարբառի համար բերված է «խթիլ»-ը «մշտել, բոթել» բացատրությամբ: Այդ իմաստով առկա է միայն դըմըչկը-լիլ-ը:

Թուշ «այտ» բառի բարբառային ձևը ոչ թե «թուշ» է /= թօ՞շ/, ինչպես նշվում է ՀԱԲ-ում, այլ կը՞, որից կը՞մկը՞մ «քարաթոթոշ» բարդությունը:

Կամ /<կամ/ շաղկապի փոխարեն ասվում է յան՝ /օր. Յան հավիլ կըտա, յան պակաս/:

Կայուի բառի բարբառային ձև է համարվում «ակոա»-ն «ատամ» իմաստով և Մարաղայի, Մոկսի ու Ոգմի բարբառների համար նշվում է

21 Նկատի ունի ճյուղավորությունները:

22 Տե՛ս Խ. Ս. Ղ ա գ ա ը յ ա ն. նշվ. աշխ., էջ 17, 35:

23 Օտարամուտ բառերը ոգմեցիներն առանց դժվարության ճանաչում են և պնդում կամ «մուկացանակ ա», կամ «վրանըցիր քըսին», կամ էլ «լսիր ինք հաստը, մըէր չա»:

նույն բառաձևը «իմաստության ատամ» նշանակությունը: Բարբառում գործածվում է ոչ թե «ակոս», այլ աթուռ ձևը, որի 2-րդ իմաստն է «սեղանատամ», իսկ կտրիչ ատամն անվանվում է աչիչ ատամ /աչկ < աչք բառից/:

Ողմեցիներին ոչ մեկը չի վկայում, որ իրենք կուրթ /<կորդ/ «խուպան, անվար, անմշակ» իմաստով բառ ունեն: Նրանց համար հասկանալի է խամ-ը, որի մյուս իմաստներն են «1. խաղողի վազի ոստ, 2. անփորձ»:

Աճառյանը գրում է, որ «չաքարի կտոր» իմաստով «կոչկոռ» բառը «կենդանի է Ալշ. Մշ. կոչկոռ, Պլ. գոչգոռ» ևն ձևերով և զանազան առումներով», իսկ Ողմի բարբառում այն առկա է «սառած կարծրացած ցեխ» նշանակությամբ: Նման իմաստով այդպիսի բառ Ողմի բարբառում չկա: «Ցեխ»-ի փոխարեն էլ գործածական է ք'օռ /<գայո/ ձևը, որը նույն արմատի գավառական բաժնում նշված չէ:

Ծիշտ է բացատրված «իշխիլ» /<իշխել «համարձակվել»/ բառը, սակայն բարբառային ձևը գ'ախշիլ է /շ/ խ դրափոխությունը/:

Արգելուլ բայի դիմաց Ողմի բարբառի համար նշված «արգըլիլ» բառի փոխարեն գործածվում է թողուլ > թըխնիլ անկանոն բայի ժխտական ձևը՝ չըն թրխնի /անց. կտր. չըթըխէցէն'ն/:

Հեւ «հեւլ» արմատի տակ «հոգնածությունից ևն հատկուր շնչել» նշանակությամբ բերված է «խէվալ»-ը: Այդպիսի բառ Ողմի բարբառը չունի: Գործածվում է հըլհըլալ'-ը, որի իմաստն է «արագ- արագ շունչ քաշել»:

Գոռ «գոչյուն, բոռալու ձայն, բզավոց» արմատի տակ նշվում է «գ'ըռալ» ձևը<sup>24</sup>, մինչդեռ Ողմի բարբառում բոռալ է: Այդպես և՛ ոչ թե ագռաւ />կըռէք'/, աղիւս />օղէս/, գուլթ />գ'ոյթ/, աղիք />աղէք'/, դամոն />դամուն/ «մի տեսակ սալոր», երկիւղ />յէրկօզ/, գուարճանալ />գվարճանալ/, գդոյշ />սկուշ/, մերկ />միրկ/, այլ կառկառ, ք'արփէնչ, խէղճ, յէ-ղըրճուլթ, սալուր, վըլխ, օ'րախանալ', կամօվ, տըկըլուզ:

բ) Բառեր, որոնք բերված են զուգաձևերով: Եթե ըստ Աճառյանի մեկնաբանության ողմեցու գործածած թան բառն ունի «ապուր» իմաստը, ամենևին հարկ չկար, որ նա սեփականացներ բարբառում չգործածվող «ա պոր»-ը /<ապուր/, այն էլ «սուպ, շոռվա» նշանակությամբ: «Ապուր»-ը այլևայլ ձևափոխություններով ասրածված է ուրիշ բարբառներում/ «... Մկ. Սլմ. Վն. ասլուր» և այլն/:

Բողոք «բարձրագույն գանգատ» արմատի տակ, իբրև գավառական ձև, նշված է «բ'օղօքիչ», իսկ գանգատ «տրտունջք, բողոք»-ի դիմաց՝ «գ'անգ'ատ», որոնցից առաջինը Ողմի բարբառում չի գործածվում, համապատասխան է վերջինը, սակայն սխալ է տառագարձված, պիտի լինի կ'անգ'ատ: Բարբառում առկա է էշ > յէշ բառը: ՀԱԲ-ում /հ. Բ, էջ 118/ բերված է «յէշ» ճիշտ ձևը, իսկ «ավանակ»-ը /հ. Ա, էջ 391/ գործածական չէ:

Կամ «ուզելը, հոժարություն, ցանկություն» արմատի տակ նշված է «կամանալ» ըսյը, իսկ յոյզ «ուզել» արմատի տակ՝ «ուզիլ»-ը: «Կամա-

24 «Քննություն Վանի բարբառի» աշխատությանը կցված բառացանկում «գյ»-ի փոխարեն շնչեղ ձայնեղ «գ յ» է:

նալ»-ը Ոգմի բարբառում չի գործածվում, ճիշտ է «ուզել»-ը, որը պիտի տառադարձված լիներ օ<sup>ու</sup>զիլ // օզիլ ձևով /սահմ. ներկա. կօ<sup>ու</sup>զիմ, կօ<sup>ու</sup>զիս // կօզիմ, կօզիս .../:

ՀԱԲ-ում ծուռ />ժուռ/-ը բերված է «խակ» իմաստով /Հ. Բ, էջ 334/, իսկ խակ արմատի տակ նույն նշանակությամբ «խագ»-ը /էջ 319/: Սրանցից բարբառին բնորոշ է միայն առաջինը ու>օ<sup>ու</sup> Հնչյունափոխությամբ՝ ժօ<sup>ու</sup>ռ: Մերժելի է «խագ» ձևը, որը կ>զ Հնչյունափոխությամբ բարբառին չի առնչվում:

Կուտ «սերմ, հունդ, կորիզ» /Հ. Բ, էջ 664/, կորիզ «սերմ կամ պտղի տափակ կուտ, պտուղների կարծր կուտ» /էջ 648/ և հատ «կտրելը, հատված, կտոր, մեկ հատիկ սերմ, ունդ ...» /Հ. Գ, էջ 50, 52/ արմատների տակ Ոգմի բարբառի համար նշվում են «կօտ», «կողինձ», «խատ» ձևերը: Սրանցից «կողինձ»-ը գործածվում է ոչ թե Ոգմի, այլ Վանի բարբառում: Կորիզ նշանակությամբ առկա են միայն կօ<sup>ու</sup>տ /<կուտ/, խատ /<հատ/ ձևերը:

զ) Բառեր, որոնք այլ նշանակություններով առկա են ծածկալեզվում, սակայն դիտվել են որպես բուն բարբառում կիրառվող բառաձևեր:

Թուզ «թուզ պտուղը» արմատի տակ բերված է «թուզ» (=թօ<sup>ու</sup>զ) բառը այսպիսի բացատրությամբ՝ «թուզ նշանակում է նաև կանացի ամօթույթ», սակայն նշում չի արված, որ այդ իմաստով գործածվում է միայն ծածկալեզվում<sup>25</sup>:

Վար «հողը հերկելը, վարուցան կամ հերկած հող» արմատի գավառական բաժնում Աճառյանը բերում է «վարիլ» ձևը «երթալ» իմաստով /Հ. Դ, էջ 312, 314/: «Վարիլ» չի նշանակում «երթալ»: Բարբառում գործածվում է առթալ/ըռթալ ձևով: ՀԱԲ-ում /Հ. Բ, էջ 53/ երթ արմատի տակ էլ նշված է «յէրթալ» ձևը: «Վարիլ» - ը /ուղիղ է վը<sup>ու</sup>րիլ/, ծածկաբար ունի «գողանալ» նշանակությունը /օր. Դրմօ չըմօսկի, ըղտը ղընք<sup>ու</sup> տը<sup>ու</sup>ր վը<sup>ու</sup>րա «Մարդը չի նայում, ոսկիները գողացի՛ր»/:

Ձենուլ > զինիլ բայն էլ, որ Աճառյանի կարծիքով գործածվում է «միայն ծածկալեզվի մեջ», բարբառի առաջին խոնարհման /իլ/իլ<sup>ու</sup>, ը<sup>ու</sup>լ/ը<sup>ու</sup>լ<sup>ու</sup>/ լայն կիրառություն ունեցող կանոնավոր բայերից է />զինիլ, անց. կար. զինցէ<sup>ու</sup>, զինցէ<sup>ու</sup>ր, զինից, հրմ. եզ. զէ<sup>ու</sup>նա, հզն. զընցը<sup>ու</sup>/:

դ) Բառեր, որոնք փոխառված են այլ լեզուներից: ՀԱԲ-ի խնդրել />խնթրիլ/-ի դիմաց ունենք հէ<sup>ու</sup>վէ<sup>ու</sup> յանիլ /բրդ. hevi, hUvi «խնդիրք, աղերսանք, աղաչանք./, մարմին />մարմէ<sup>ու</sup>ն/-ի դիմաց ջան /պրսկ. jan/, օր. Շապէ<sup>ու</sup>ք<sup>ու</sup>՝ զօ վօր ջանին և այլն:

ե) Բառեր, որոնք բարբառում չեն գործածվում և չունեն իրենց համազորները, ինչպես արօս />արօս «թռչուն»/, արօր />արօր «թռչուն»/: Այդ կարգի բառերից է նաև առեզ-ը />առեզ «սայլի մաս»/ (Հ. Ա, էջ 257)<sup>26</sup>:

25 Տե՛ս ն. Ե. Հ ո վ ս Ե փ յ ա ն. Ոգմի ծածկալեզուն /«Ասպիրանտական գիտաշխատությունների ժողովածու». Երևան, 1969, №3, էջ 324/:

26 Ուժում երկրագործական աշխատանքների ժամանակ սայլ չի օգտագործվել: Հնձած ցորենը, խոտը տեղափոխել են շալակով:

ՀԱԲ-ում ասված է նաև, որ Ողմի բարբառում կա «լըմընալ բառ» /<լման ձևից/, որը նշված բացատրություններով գործածական է նաև հետևյալ բարբառներում՝ «Պլ. ւման «ամբողջ», Սչ. ւման «ճշմարիտ» /հ. Բ, էջ 280/: Այդպիսի բառ Ողմի բարբառում գոյություն չունի:

Բարբառին յուրահատուկ բառաձևերը անուշագրության մատենելով՝ ՀԱԲ-ում բերվում են նաև այսպիսի թվականներ՝ երեսուն />հէսուն/, յիսուն />հէսուն/, հարիւր />խարէր/, որոնք ունեն հետևյալ կազմություններ՝ ք'ըսանըտաս /20+10/, յերկօտիք'ըսան տաս /2x20+10/, խէ'նգ'տիք'ըսան /5x20/: Բազմապատկումը կատարվում է տի «անգամ» բառով կամ տվյալ թվին ավելացվում է պակասը լրացնող թիվը:

Աճառյանը եօթանասուն բառի տակ նշելով բարբառային մի շարք ձևեր՝ «Մկ. յօթանասուն, Մչ. յօտանասուն, Սչ. օխտանասուն, Երև. Շմ. Սլմ. Զդ. Տփ. օխթանասուն, Ագլ. Գոր. օխտանասուն, Ղրբ. օխտընասուն, ուխտընասուն, Մրդ. օխտանացուն», ավելացնում է. «Մյուսները գործածում են թուրքերեն yetmiş ձևը»: Ողմի բարբառը այդ ձևը չի ընդօրինակել, իր օրենքներով ձևավորել է իրիք'տիք'ըսան տաս թվականը /երեք քսան՝ 60+10/: Այսքանով մեր գիտողությունները չեն սահմանափակվում, բերվեց միայն գրանց մի մասը:

ժամանակն է, որ Ողմի բարբառը ձևաբազմապատկի անհավանական կարծիքներից, իրեն վերագրվող արհեստական բառաձևերից և գիտությունը ներկայանա իսկական տեսքով:

## ЭТИМОЛОГИЧЕСКИЕ ЗАМЕЧАНИЯ О СЛОВАРНОМ ЗАПАСЕ ВОЗМСКОГО ДИАЛЕКТА

НИКОЛАЙ ОВСЕПЯН

### Резюме

Словник возмского диалекта впервые составил Г. Ачарян, к чему он обратился в своем "Армянском корневом словаре". Этот словник, однако, неполноценен, охватывает лишь часть словарного запаса диалекта. На основе фонетических исследований выясняется, что многие слова представлены не в точных транскрипциях. Необоснованно также мнение Г. Ачаряна, что в возмском диалекте существуют нёбные /w/ и звонкие придыхательные согласные (p', q', r', d', ʒ'), между тем им противопоставлены имеющиеся глухие взрывные q, k (k'), m (m'), s, d. Некоторые слова имеют неправильное толкование. Например: դադարել "уставать", թշնամի "сатана", կզակ "нёбные занавески", կռան "одна из частей мельницы", վարիլ "идти" и т.д. В словарном запасе нашли место такие слова, которые в возмском диалекте не употребляются, но сохранены в других диалектах армянского языка.